139. ՀԵՔԻԱԹ ԼՈՌԸՑՈՒ ԼԵԶՎՈՎ

Հին ժամանակը էլել ա մի պառավ կնիկ, ունեցել ա մի տղա, ապըրուստ ավելի ոչինչ չի ունեցել, մի կով ա ունեցել, մին էլ մի հավ։ Մի օր պառավը իր տղին ասավ.— Ա՜յ որթի, մեր կովը խու սոված սատկեց, խի՞ չես տանում ըրածացնում։

Տըղեն կովը քըշեց տարավ ըրածացնելու։ Մի գել արոտատեղը էկավ, կովի հետ ախպերացավ։ Հիրիգումը տըղեն կովը քշեց, որ տանի տուն՝ իր մերը կըթե, էն գելն էլ կովի հետ գընաց գըռանը կանգնեց։ Պառավը դուս էկավ, որ կաթը կըթե, տեհավ կովը դըռանը կանգնած ա, ու մի գել էլ կողքին հիրար դումչ լիզում են։ Պառավը կաթը կըթեց տարավ, որ մածուն մերե, էն քըշերը գըռանը կովը ու գելը հիրար ճիտ արին չկել լիսը։

Հըռավոտը լիսացավ, էլ տըղին ասավ.— Ա՜յ որթի, վեր կաց, հացըդ կի ու կովին տար ըրածացրու։

Ասավ թե չէ, դուս էլավ, տեհավ կովն ու գելը էլ հիրար հետ քեփով գընում են դըրա հանդը, գընաց տուն իր տղին ասավ.— Պըրծի չուստ արա, գընա, վայ թե գելը կովին վեր կոխե ուտե։

Տըղեն մորն ասավ.— Ա՜յ մերա, թե որ ուտող էր էրեգվան սաղ օրը հիրուր հետ են խի՞ չի մի զարար տվուց։

Մերրն ասավ.— Որթի, չունքի թըհենց ա, դե թող տենանք ո՞նց են հիրար հետ յոլա գնում։

Օրն էկավ մըթնեց, պառավը դուս էլավ, տեհավ կովն ու գելը ամեն օր անշառ գընում են ըրածում ու գալի տուն, էլ տղին կովի պահելու հըմա ոչինչ չէր ասում։ Մի հըրիգուն էլ կովն ու գելը էկան տուն, պառավը դուս էլավ կաթը կըթեց, տարավ տուն ետ դասպեչա դուս գընաց, տեհավ մի խեղճ մարթ գըռանը կանգընած։

Էն մարթը հարցուց թե.— Դեդի ջան, ըլիլ չի, որ էս քըշեր քու տանը ղոնախ պահես։

Պառավն ասավ.— Խի՞ չի ըլիլ, քի մատաղ գընամ, ղոնախը աստրծունն ա։

Դու մի ասիլ, էս մարթը թագավոր ա, պառավին փորձում ա, պառավը բանի խաբար չի։

Պառավըն էն հրիգունը պատրաստություն տեսավ իր տանը, ինչ որ գըդավ աստծու տվածեն, էս մարթին հաց ուտացըրուց. հաց կերան պըրծան, սուփրեն վեր քաշեցին։

Ըժու էս մարթը պառավին հարցրուց.— Դեդի ջան, ձեր թագավորը ո՞նց ա, բարի թագավոր ա, թե՝ չէ։

Պառավն ասավ.— Ա՛յ ախպեր ջան, մեր թագավորին աստոծ երգար կենք տա, էն ղըդա լավ ու բարի թագավոր ա, որ մի կով ունինք՝ գելն ու կովը ցերեկը հիրար հետ գընում են ըրածում, էլետ գըշերը տուն գալի, մի հավ էլ ունինք օրենը իրեք ձու ա ածում, որ նըհանցով բոլ-բոլ յոլա ենք գընում ու ձեզ պես աստրծու ղոնախին էլ հըռաստ բերած վախտը ինչ ղըտա կարում ենք, պատիվ ենք տալի։

Ըստուր վրա պառավի զըրիցը ջատ դուր էկավ թագավորին, ըժու պառավին ըշկարա արավ, թե.— Ես եմ թագավորը։

Պառավը իր մտկումը աստրծուն փառք էր տալի, թե. «Փառք քու խընամքիդ, աստված ջա՛ն, որ թագավորը մեր աղքատ տանը լայաղ արավ, հաց կերավ»։

Թագավորը ասավ պառավին.— Դեդի ջան, խընդրըեմ, որ հեքուց էտ հավը քու տըղին տաս, բերե իմ տունը։

Պառավն էլ ասավ.— Շատ լավ կըլի, կըղըրգեմ։

Հեքսը լիսացավ, հավը տղին տվուց թե.— Տար թագավորին փեշքաշ արա, վախիլ մի, նա էլ քի դըրա բադալը լավ զադ կըբաշխե։

Տղեն հավը վեր կալավ, տարավ թագավորի դուռը կանգնեց, մտիկ արավ տեհավ՝ թագավորը իր օթախումը աստրծու հըմա աղոթք ա անում։ Էս տղեն փիքըր արավ. «Թե սա էլ ա աստրծուն ղանչանք անում, անմեղ տեղը մեր մի օրվան հիրեք ձուն խի՞ստ

իմ կորցնում, հազիր եդ մեր տունը տանիմ, մենք էլ հընենց յոլա զընանք, ոնց որ չրկել հրմի յոլա ենք գընացել»։

Թագավորին ըրևաց ոչ, ետ գնաց, հավը տարավ մոր կուշտը, մերը, որ տեհավ, ասավ.— Որթի՛, խի՞ ետ բերիր։

Տըղեն ասավ.— Է՜հ, ես որ դիղացել ի, թե բանը ըսենց ա, ըսկի տանիլ չի։

Մերը ասավ.— Որթի՛, որ ըթենց արիր, դեհ գնա մի քիչ փետ բի էդ մոտիկ ծմակիցը, հաց թխենք, թխած հաց չունինք։

Վեր կացավ մի հաց գոտկումը դրուց, մի թոգ էլ վեր կալավ, գընաց ծըմակումը փետը կըտրեց, թոգի վըրա դարսեց, ղայիմ կապեց, տակին կըռացավ, որ շըլակե։ Բիրդան ըղաքի կրռանը մըտիկ արավ, տեհավ քառասուն մենձ կարաս, քառասունն էլ ոսկով լիքը. խիստ շատ ուրախացավ, դարսած փետը շըլակեց, տարավ տուն, սըրահումը վեր ածավ, ըժու իր մոր հետ ծըմակի տեհածները հեքիաթ արավ։

Մերը ասավ.— Որթի՛ շան, խազինեն որ կըգըդնուն՝ ադաթ ա, թագավորին իմաց կանեն։

Գընացին թագավորին իմաց արին, ամա պառավը ծերքի խոսքը էս ասավ.— Հավը, որ դու ուզեցիր ինձանից՝ տըղիս տըվի ղըրգեցի, նա էլ բերել էր, տեհել, որ դու էլ ես աստըծուն երկըրպագություն տալի, փիքըրըն էր արել, թե որ ըսենց ա, մեր հավը ետ կըտանիմ մեր տունը, մենք էլ լավ աստըծուն երկըրպագութուն կը տանք։

Թագավորը, որ էս տըղի հավը բերիլը ու էն խորը մըտքով ետ տանիլը հիմացավ, իր մըտքումը զարմացավ, շատ հավանութուն տըվուց, մի քանի մարթի ասավ.— Էս տղին վեր կալեք, գընացեք, տեհեք, թե որ խազինի գդնուլը ըղորթ ա հա, վըրեն ղարաուլնի կանգընացրեք, ըժու դուք ետ էկեք։

Ոնը որ թագավորը հըրաման տըվուց, գընացին, տեհան խազինի գդնողը շիտակ ա, էլ ետ էկան թագավորին հիմաց ըրին։

Ըժում հըրաման տըվուց, թե.— Էդ տըղին ու իր մորը կըտանիք իմ օթախնուցը մընի միջումը պահ կըտաք, յոլա կէրթան ու դուք կէրթաք իմ պալատի միջի մարթկերանցը չիմնուն էլ կասեք թե. «Թագավորը ասում ա՝ հեքուց ճաշին համեցեք իմ ղոնախըն եք»։

Գընացին հիմաց արին՝ ոնց որ թաքավորը հրաման էր տըվել։

Հեքսը լիսացավ, ճաշին ղոնախնին չիմն էլ էկան թագավորի

տունը լով, քու հավան կացած, քեփ արին, պըրծան, սուփրեն վեր քաշեցին։ Ըժու թագավորը ասավ.— Գիտե՞ք ինչ կա, ես ձեզ մի խընթիրք ունիմ ասելու, ամա էրեսպաշտութենով չի ջուղաբ տաք։ Էս պառավն ու տըղեն մեր ու որթի են, սըհանք ունին մի հավ, օրենը հիրեք ձու ա ածում, ես պառավին ղանչանք արի. թե էդ հավը քու տըղին տու, բերե իմ կուշտը. տըղեն բերել ա, մտիկ ա տըվել, տեհել ա, ես ինձ հըմա իմ օթախումը աղոթքըն եմ անըմ, կանգնել ա ու փիքըրն արել թե՝ «էՀ, սա էլ ա աստըծու հըմա աղոթքն անում, անմեղ տեղը մեր մի օրվան իրեք ձուն խի՞ ենք կորցընում» էս մտկովը հավը եդ իրանց տունն ա տարել։ Ըժու ընդիան գնացել, որ իրանց տան հըմա փետ բերի, փետատեղը քառասուն կարաս ոսկի ա գդել, հըմի դուք ձեր աստոծը, էն ղըտա փողն ո՞ւմ ղըսմաթըն ա։

Խալխը չիմ միբերան ղայիմ ձեն տըվին.— Էդ խազինեն պառավի ու իր տըղի հալալ աստըծու տըված ղըսմաթըն ա։

Նըհանց կըտրած դիվանը թագավորին էլ շատ դիր էկավ։ Ըժու թագավորը պառավին ու իր տղին կանչեց, ասավ.— Կերթաք էն քառասուն կարաս ոսկին կըտիրապիտեք, թե որ ուրիշ էլ կուզեք, իմ խազինիցն էլ տամ, տարեք։

Գըլուխ տըվին ու ասին.— Թագավորը ապրած կենա, էն ղըտա խազինեն էլ մեզ բոլբոլ հերիք ա, ուրիշ էլ ի՞նչ ենք անում։

Շնորհակալութին արին թագավորիցը ու գնացին, էնղըդա խազինեն տիրեցին ու իրանց աստըծուն փառք տալով քեփ ին քաշում, ոնց որ թագավոր։ Ջարն ընտի։ Աստըծուցը հիրեք խնձոր վեր գա, մինը ասողին, մինը լսողին, մինն էլ ալամ աշխարքին։